ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տնտեսական եւ Բնական

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻՒ 6. 1854 ՄԱՐՏԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲՆՈՒԹԻՒՆ

Հրահանգ, Զբօսանք և Մխիթարանք հասարակաց։ (Տես երես 51)

« Երջանիկ զգացումն և ախորժանք, և պատճառ խաղաղութեան և բարեաց մարդկան. թէ որ յանկարծ այսպիսի աղդեցութիւն մը վերնար երկրէս, մարդիկ ոչ միայն բարբարոս, հապա մէկմէկ գազան պիտի դառնային։ Այո, անասուն պիտի դառնային, որովհետև զԱստուած ճանչնալու մեծ ջահն պիտի խաւարէր աշխարհքէս, որ է ինքն բնութիւն. վասն զի ինչպէս իմաստուն Առաքեալը կը վկայէ, Աստուծոյ էութիւնը և զօրութիւններն 'ի սկզբանէ մարդկան՝ այս զգալի արարածներովս կը ճանչցուին և կը վկայուին. և թէպէտ « յանցեալ ազգսն, նոյն ինքն կ'ըսէ, թոյլ ետ Աստուած ամենայն հեթանոսաց գնալ 'ի ճանապարհս իրեանց, սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող ». և ինչ են այս վկայութիւնները. « Բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրևս և ժամանակս պտղաբերս, ևն ». այսինքն է բնութեան բերքեր, զորոնք ոչ միայն նիւթական վայելք պատրաստեց Հաստիչն, հապա նաև զինքն իմացընելու գործիք. որով իմացմամբ մարդիկ ի-

րենց սկիզբն ալ իրենց վախճանն ալ կ՚ի-
մանան ։ — Այս արարածներն էին՝ որ
ամենէն աստուածապաշտ և բարերար
մարդիկը կազմեցին . ինչպէս են Ենովս
մը , Աբրահամ մը , Յոբ մը , Դաւիթ
մը , և այլն . այս ետքի երկուքին գրքերն
ինչուան այսօր դիմացնիս է , և անդա-
դար կը կարդացուին , և կը տեսնենք թէ
ինչպէս բնութեան առարկայք՝ կը պտըտ-
ցընեն կը հանեն մարդուս միտքը հա-
սարակաց ստեղծողին , և երկրէս վեր
զուարճութիւններ զգալ կու տան սրտի .
" Երկինք պատմեն զփառս Աստուծոյ
,, և զարարածս ձեռաց նորա պատմէ
,, հաստատութիւն ,, , կը կանչէ պարզ
և արդար հովուեակ մը . և նայելով
նայելով չկշտանար , դարձեալ կ՚ըսէ .
" Տեսից զերկինս զգործս մատանց քոց ,
,, զլուսին և զաստեղս՝ զորս դու հաս-
,, տատեցեր ,, . և իր հովուութեան ան-
զբաղ ժամերուն մէջ՝ անդադար դիտե-
լով զբնութիւն և մտածելով անոր վրայ ,
այնչափ միտքը կը բարձրացընէ , սիրտը
կ՚ազնուացընէ , որ աստուածատես և
Աստուծոյ սիրելի կ՚ըլլայ և կը վկայուի
Աստուծմէ ալ , և անանկ յիշատակ մը
կը թողու երկրիս վրայ , անանկ եր-
գարան մը՝ Սաղմոսը , որ 3,000 տարիէ
՚ի վեր՝ մարդկանց Աստուծոյ հետ զրու-
ցատրութեան ամենէն սիրուն և հզօր
ճամբան և միջոցն եղած է , և պիտի
ըլլայ միշտ ։

" Ով որ բնութեան առանձնութեան
,, մէջէն՝ անաստուած կը դառնայ ,, ,
ըսաւ Շատոպրիան ։ Սպանիացի հեղի-
նակ մ՚ալ կ՚ըսէ . " Միայնութիւն ,
,, զուարճալի տեսարանք և պայծառ օդ՝
,, զանբեղմնաւոր միտքն ալ գեղեցկախօս
,, հեղինակ կ՚ընեն ,, ։ Բնութեան ան-
խօս վարդապետութիւնն է որ ամէն ազ-
գաց մէջ՝ արդարասէր միտքեր կրթեր և
իմաստնացուցեր է , և անոնց ձեռքով՝
իրենց ազգերն ալ կրթեր է . անոնք
ինչ որ բնութեան վրայ դիտած են ,
զայն նկարագրելով իրենց տխմար ըն-
կերներուն՝ յաջողեր են քաղաքակա-
նութեան և կրթութեան բերելու զա-
նոնք ։ Այսպէս եղած են Յունաց մէջ
Ամփիոնք , Եսովպոսք . Հնդկաց և Ա-
րաբացւոց մէջ՝ Լոքմանք և Պիտբայիք .
Հայոց մէջ՝ Մեսրոբք և Գոշք , որոնք
իրենց ազգին կրթութեան յարմարա-
գոյն վարժարան և վարժելիք՝ բնու-
թեան բացավայր տաճարը սեպած են ։
Մեր ազգին ամենէն հին իմաստասէր և
ճարտարաբան և սրբազան անձը՝ Հայկ-
ազնն Անուշաւան , որ Աբրահամ նա-
հապետին ժամանակակից է , բացօթեայ
տեղ , լայնատերև հողմաշարժ սօսինե-
րու ներքև առաւ իր կրթութիւնը և
նուիրականութիւնը , անոր համար Սօս
ալ անուանեցաւ ։ Եւ մեր լուսաւոր դը-
պրութեանց առաջին վարդապետն Մես-
րովբ , իր զարմանալի աշակերտներն՝ Ա-
թէնք , Աղեքսանդրիա և Բիւզանդիոն
խաւրելէն առաջ՝ բնութեան բացա-
վայր վարժարանին մէջ նախակրթեց ,
մտքերնին պարզեց , զօրացուց , և պէս-
պէս գիտութեանց և դպրութեանց յար-
մար ամաններ ըրաւ . " Մեսրովպայ
,, կացեալ յանապատ և ՚ի հովանաւոր
,, տեղիսն , որ Շաստգոմքն անուանին ,
,, բովանդակեաց զվարդապետութիւնս
,, առաջին առելոց խմբիցն ... Թողեալ
,, վերակացուս յիւրոց աշակերտաց ՚ի
,, նմին տեղւոջ ,, . (Խոր . Գ . Կ) ։
Այսպէս երբոր Ուտիացւոց և Աղուա-
նից երկիրն ալ գնաց՝ անոնց ալ վարդա-
պետ ըլլալու , հոն ալ իր աշակերտնե-
րուն " Բնակէին ՚ի ճախճախուտ և ՚ի
,, լռաբոյս մայրիսն ,, . Նոյնպէս երբ
նոյն աշկերտներն դարձան յԵրուսաղէ-
մէ , դարձեալ " Ի մայրոլորտ յովտի
,, պուրակին (Ողախու) բնակէին ,, .
և Արցախու " անտառաւէտ և խորա-
,, խոխոմ ,, տեղուանքը . (Մ . Կաղկ .
Ա . ԻԷ . ԻԸ) ։ Այսպէս մեր իսկ թարգ-
մանիչք ալ երբոր դարձան ՚ի Հայս ՚ի
Յունաց , իրենց վարդապետարան ըն-
տրեցին այնպիսի միայնութեան և բնու-
թեան ազատ տեղուանքը , ինչպէս ին-
չուան հիմա կը վկայեն Հայաստանի
մէջ Թարգմանչաձոր ըսուած տեղուանք ։
Եւ ինքնին վարդապետաց վարդապետն
Մեսրովբ հայերէն այբուբենը չկրցաւ
սովրիլ քաղքըներու և լարաններու

մէջ, հապա բաց տեղ լերան մը գլուխ. «Ի լերան Նալուայ, 'ի յերկնապարզ և յաշխարհատեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման». (Մարգան): Հաւատարիմ և զգօն վարդապետ, ինչպիսի տեղ որ ինքն սովրեցաւ, այնպիսի տեղ իր աշկերտներուն ալ սովրեցուց. և այն անապատ ու հովանաւոր տեղուանքն չէ թէ վարժապետի մը պէս, կ'ըսէ իր ձեռասուն և արենակից աշակերտը Մովսէս, հապա առաքելաբար իբրև հօգի կը փչէր իր գիտութիւնը:

Այսպիսի տեղուանք կը սիրէ, կամ սիրել կը ցուցընէ, նոյն ինքն աստուածային Հոգին Իմաստութեան. որ բնութիւնը դեռ նոր ձևանալուն պէս՝ վազեց իր յաւիտենական աթոռէն, և անկերպարան անդունդներուն վրայ թևերը տարածած անդադար կ'երթար և կուգար, ինչուան որ ձևացուց կազմեց այս տիեզերքս. և նոյն բնութեան առանձնութենց մէջ կրթեց իր ընտրեալ նահապետներն ու մարգարէները. և երբոր իր սիրելի Դաւիթ աշկերտը՝ հարկ սեպեց Իսրայելացւոց օգտին համար՝ անոնց թագաւորական պալատը բնակեցընել, դարձեալ իրեն հետ բնութեան մէջ կը սիրէր խօսիլ. «Ի լսել քո զձայն շարժման ծայրից տանձեացն՝ ելցէ Աստուած առաջի քո». (Մնաց. Ա.). այսպէս իր զարմանալի խորհուրդները յայտնեց Աբրահամու՝ գիշերուան աստղերուն մէջէն, Յովբայ՝ Արաբիոյ լայն անապատներուն մէջ, Մովսիսի՝ լերանց, թփերու և արօտներու մէջ, Եղիայի՝ Քորեբ լերան հողմնախաղաց քարայրներուն մէջ, Ամովսայ՝ թթենիներու տակ, Երեմիայի, Եզեկիելի և այլոց՝ Եփրատ և Քոբար գետերուն եզերքը, և այլն, և այլն:

Աս ամենէն զարմանալի և անհակառակ Ճշմարտութիւն, երբոր ինքնին Նորոգողն մեր բնութեան, մարդկօրէն վարդապետ մ'ալ ձևացաւ, ո՞ւր ընտրեց իր վարդապետարանը, ուսկից իր օրինակները:... Բարեկամ, դու Աւետարան կը կարդաս. բաց անոր առաջին գրողը, Մատթէի աւետարանը, և տես քու Աստեղծիչդ և վարդապետդ որ քեղի նմաններուն դաս տալու՝ շատ հեղ լերանց գլուխ կ'ելլայ, երբեմն ծովեզերք կը նստի, երբեմն անապատ տեղեր կը քաշուի. և բերած օրինակներն՝ մեծ մասը բնութեան տեսարաններէն են. միայն այդ յիշեալ պզտի գրքին մէջ՝ թերևս հարիւրէն աւելի աստանկ օրինակներ կան, արեգական և աստեղաց, արևելքի և արևմտից, անձրևու, հովերու, փայլակներու, դաշտերու, այգիներու, թզենիներու, թթենիներու, հօտից և հովուաց, արծուեաց և աղաւնեաց, ձկանց և օձից, ագռաւուց և ճընճղկանց, հողմնաշարժ եղեգան և հունձերու, վայրենի շուշաններու և մանանեխի հատի, անվար թռչուններու, ողջաւոր աղուէսներու, թխամայր հաւերու, և այլն: Այսպիսի սրբազան և պատկառելի օրինակ մը ունենալով՝ մի՛ տարակուսիր որ բարուց կրթութեան և մտաց սրութեան մեծ և դիւրին միջոց է բնութիւնը, և վարդապետութեանց մէջ՝ բնական ոճով գրուածքները:

Նայէ աս տղուն դաշտին մէջ. քանի հեղ տան մէջ իր դասերն կը սորվէր կու լար. հիմա հոս խոտերուն մէջ ինչպէս կ'ուրախանայ, կը ցատքըտէ, գոհ հանդարտ և երջանիկ է. ինչ զօրաւոր է բնութեան մայրենի ուժն՝ որ աստանկ մանր և տղէտ մարդու մը սրտին ալ կ'ազդէ: — Հապա այդ մանուկը՝ որ ձանձրութեամբ և նեղութեամբ վարպետին չոր չոր դասերն լսելով՝ շատ հեղ փախուստ կը փնտռէ, և կը դժարի իր հասակին դալարը ցամաք ուսմանց մատնել՝ թէ որ Մեսրովպայ նման խոհեմ վարժապետը հանէ զինքն ալ հովանաւոր բացավայր մը և հոն դաս ըսէ, ինչպէս դիւրաւ կը տպաւորէն այն բնաբարի մտաց վրայ՝ որ և է չորս պատի մէջ դժար երևցած դասերը, հոն չորս ժամու մէջ սովրիլ չկրցածը՝ հոս այնչափ ատենի մէջ կը սովրի, որուն կրկինն ալ անմեղ խաղով կրնայ անցընել: — Իսկ այդ պատանիդ՝ որ մի՛ խաղալէն, ցատքելէն համ չառնուր, բայց դեռ կ'ախորժի թափառիլ դաշտերու մէջ, բլուրներու վրայ

ելլալ, տեղեաց գժուարութեանց հետ կռուիլ, նեղուցներու և ափափաներու մէջէն անցնիլ. երբեմն ալ ունեցածէն աւելի հասակ ունողի պէս՝ ծանր կը քալէ, նորարծարծ կրից անորոշ ձայներուն միտք դնելով. ուր արդեօք այնպէս ախորժելով և օգտակար կերպով կրնայ ըսել զգօն բարոյախօսին խրատները, քան թէ այն բնութեան ՀԵմարաննեբուն մէջ. ուր զանազան տեսարանք և առարկայք՝ ինքնին կը թելադրեն վարպետին ալ աշակերտին ալ։ . . . Այց մի՛ կարծեր, թէ այս խօսքերս տղաքը դպրոցներէն դուրս վազել տալու և վարպետներն ալ յուսահատցընելու համար է. հապա գիտնան վարժապետը և ազգին կրթութեան հոգացողք՝ այսպիսի դաստիարակութեան փոյթ ունենալ, և ըստ կարելոյն ստէպ հանել համբակները բաց օդու, և երանի թէ կարենային նաև անանկ տեղուանք հաստատել իրենց վարժարանները։ Այսպիսի կրթութեամբ նախ մանկանց մարմինը առողջագոյն կ'ըլլայ. “ առողջ հոգւոյ ,, համար ալ՝ առողջ մարմին պէտք է ,,. կրքերնին հանդարտ կ'ըլլայ. քաղաքական դիպաց և հրապուրանաց և պատերու ազդած ձանձրութիւններէն ազատ կրմնան. արտաքին անմեղ և զուարճալի տեսարանք և ղեսանք՝ չեն թողուր օտար և դառն դառն ղեսանքներ փնտրուելու։ Եկ խօսքով՝ տղոց բարքը աւելի անմեղ, միտքերնին աւելի ընդարձակ, կազմուածքնին աւելի ուժով, և ապագայ ուսմանց և արուեստից աւելի ընդունակ կ'ըլլան, նաև յարմարագոյն և կարողագոյն՝ փորձանաց ալ տանելու։ Ոչ միայն աշակերտաց, այլ և վարժապետաց իսկ՝ ինչ աւելի ախորժելի է, քան թէ երբեմն իրենց ձանձրանալի աշխատանքէն ետև ժամ մը բնութեան մէջ հանգչելու։ Բրուեստաւորի և մշակի մ'ալ, բոլոր օրուան յոգնութենէն ետև, անոյշ չէ բաց տեղ մը նստիլ և քրտինքը սրբել։ Եւ իմաստնոց ամենէն անուշ զբօսանքը բնութեան արձակ տեղեաց մէջ պտըտիլն է։ Այն առանձին պտըտիլներուն պտուղներն են շատ օգտակար գիւտեր՝ որ մեզի այսօր այսչափ դիւրութիւններ կու տան. այն բնութեան մէջ մտածմանց և շրջագայութեանց ատեն պատրաստած են շատ գեղեցիկ իմաստասիրական և բանաստեղծական գրքեր որ զմեզ կը զուարճացընեն. այն ժամերուն արգասիքն են՝ շատ պիտանի խորհուրդներ, որով ազգք և տերութիւնք երջանկացեր են։

Արդեօք որչափ չարիք և կիրք պակաս պիտի ըլլային աշխարհքէս՝ թէ որ մէկը ստիպեր թիւ մը քաղքի մէջ ապականութեան վարժած կամ հակամէտ մարդիկ՝ օրը քանի մը ժամ բնութեան տեսարանաց մէջ պտըտիլ. և վարժապետ մ'ալ՝ թանձրամտաց բացատրեր տեսած բաներնուն իսկութիւնը։ Կամ որչափ աւելի չարիք և բռնութիւնք պիտի ըլլային, թէ որ այս գեղեցիկ բնութիւնս իր աներևոյթ և կակուղ սանձը չդներ այն անգութ սրտերուն վրայ։ Որ արիւնարբու բռնաւոր՝ բնութեան գեղեցիկ և ահաւոր տեսարանաց առջև երբեմն կանկ չէ առած, կամ սիրտը թուլնալով կամ վախնալով, կամ միտքը բարոյական սկզբունք մը բերելով։ Երբոր կրքերն այնպէս թանձրանան՝ որ խրատի ձայն չհասնի սրտին, կամ շողոքորթութիւն և վախ կապեն ուրիշներուն բերանը, միայն բնութիւնն է որ իր անուշ ձայնը կը լսեցընէ ամենայն դառն ականջաց և սրտից ալ։ . . . Կը տեսնեմ սա ահեղ ընդարձակ ծովը, կը տեսնեմ այդ գոռոզ ուռած ալիքներն, ինչպէս ուժով իրար քշելով կու գան դէպ 'ի ցամաք. այս տկար աւազը ինչ պիտի ըլլայ այն ովկիանու բարբարոս գունդերուն դէմ. — պիտի յաղթէ՞ անանց. մարդս գիծ մ'ալ չետը չկրնար քշել այդ ալիքները, բայց աւազը միշտ կը մերժէ զանոնք, գրեթէ ողջ ողջ ծծելով մը. Այստուծոյ մատէն գծուած սահմանը կայ հոն, ուսկից անդին չանցնիր ծովը։ . . . Այց ինչ է այդ մարդկանց բազմութիւնը ծովուն եզերքը. Կանտինաւիոյ հզօր աշխարհակալ թագաւորն Վանուդոս հոն է. հետը բազմութիւն զօրաց, բազմութիւն ծառայից՝

որ հրամաններուն կը սպասեն, բազմութիւն շողոքորթաց որ զինքը գրեթէ ամենակալ կ'անուանեն. Թագաւորը կ'ախորժի ձայնէն, բայց ծովուն վրայ նայելով կը ճանչնայ անոր սուտութիւնը. կը հրամմէ որ կանգնեն իր թագաւորական գահը աւազին եզերքը, և կը բազմի փառօք. քովինները կէս մը իրաւ, կէս մը սուտ վախով կ'ինկնան իրեն երկրպագութիւն ընելու, «Կեցցէ՛ թագաւոր մեր յաւիտեան» կանչելով. բայց դեռ իրենց գովեստը չկտրած՝ ահա ծովուն սովորական ընթացիկները՝ ճերմակ ցցունքներ դրած սպառազէններու նման բարձրացած կու գան, և մինչդեռ թագաւորին շողոքորթներն կ'ուզէին ըսել՝ թէ ծովն ալ իր ալիքները երկրպագութեան կը ղրկէ, իսկ ինքն ալ հպարտութեամբ մը Նո՛ք կեցիք կը կանչէր անոնց, ահա բնութեան անգութ որդիքը, այն անարգել ալիքները՝ մէկ զարնուածքով մը թագաւորն ալ իր գահն ալ գետին կը փռեն իր երեսպաշտից վրայ, և իրենք ամենուն վրայէն թաւալելով կ'անցնին կը դառնան: Բանուդոս աղի թուք մը թքնելով՝ «Ահա տեսա՛ք, կ'ըսէ, հպատակներուն, որ թոյլ ալեաց ալ չկրցայ հրամանս անցնել»: Այս օրինակս բաւական կ'ըլլայ շատ զօրաւորաց և բռնաւորաց ճանչցընելու իրենց բնութեան չափը, և իրենցմէ մեծէն պատկառելու:

(ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Մագդաղենացւոյ եկեղեցի 'ի Բարիզ:

Գաղղիոյ հռչակաւոր շէնքերուն մէջ առաջին տեղին ունի նաև Բարիզու Մագդաղենացի ըսուած եկեղեցին, որուն վրայ կ'արժէ որ համառօտ տեղեկութիւն մը տանք մեր ընթերցողաց:

Բարիզու Սէնթ-Օնորէ ըսուած արուարձանին ժողովրդեան համար շատ պզտիկ ու նեղ կու գար Մագդաղենացւոյ հին եկեղեցին. ուստի նոր մը ուզելով շինել՝ յանձնուեցաւ Կոնդան տ' Իվրի անունով արքունի ճարտարապետին որ շէնքին յատակագիծը յօրինէ. ասանկով 1764ին եկեղեցւոյն հիմնարկութեան առջի քարը դրուեցաւ: Բայց տասուերեք տարիէն, 1777ին, Կոնդան մեռնելով Կուդիւր ճարտարապետը անցաւ իրեն տեղը, և առջի ճարտարապետին բռնած ոճին չհաւնելով՝ բոլոր առջի շինուածը աւրել տուաւ, և Հռոմայ Պանթէոնին կամ Ամենադից մեհենին ձևին վրայ յատակագիծ մը շինելով՝ սկսաւ շէնքը առաջ տանիլ: Բայց 1789ին Գաղղիոյ մեծ խռովութիւնը վրայ գալով ամէն բան անկատար մնաց: Ետքը Նաբոլէոն 1806ին Բոզէնի քով իր բանակէն վճիռ հանեց որ այն Մագդաղենացւոյ եկեղեցւոյն հիման վրայ **Փառաց տաճար** մը կանգնուի: Ուստի յորդորանաց յայտարարութիւն մը ելաւ, որ այս նոր տաճարիս համար յատակագիծներ առաջարկուին, և անոնց ընտրութիւնը Գաղղիոյ գիտնոց կաճառին[1] յանձնուեցաւ, որ իննսունուերկու առաջարկուած յատակագիծներէն չորսին միայն հաւնելով զանոնք Տիլսիթ խրկեց Նաբոլէոնին, որպէս զի իրեն դատմունքն ընէ. Նաբոլէոն իր անձնական ախորժակին աւելի հետևելով Պետրոս Վինեօնինը նախապատիւ ընտրեց քան զՊոմմինինը, զորն որ կաճառը աս չորսին մէջ ընտրելագոյն սեպած էր:

Վինեօն կործանեց ամէն առջի շինուածները, որոնք իրեն գաղափարին դժուարաւ կը ծառայէին, որ էր յունական ոճով տաճար մը շինել, ու սկըսաւ նոր հոյակապ շէնքը՝ նուիրեալ 'ի փառս գաղղիական զինուց: Բաւական առաջ գացեր էր սկսած գործը, երբոր տէրութիւնը փոխուելով Պուրպոնեանց գահը վերականգնեցաւ: Տարբեր կերպ թագաւորութիւն, մտածմունքներն ալ տարբեր. ուստի Վինեօն ալ ըստ նոր

1 Գղ. Institut.